# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 02 » փետրվարի 2024թ. № 18-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ   ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0017-0024 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լեջան, 6-րդ փողոց, թիվ 5 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ

2024թ. փետրվարի 02
գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 5 » փետրվարի 2024թ. № 19-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետերի և 41-րդ հոդվածի և Լոռու մարզպետի 2023թ. հունվարի 13-ի թիվ 15-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** Հաստատել Լոռի Բերդ համայնքի տարածքում 2024թ. ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

**2.** Կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 5-ը տրամադրել ՀՀ ՆԳՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչությանը:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

**2024թ. փետրվարի 5**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2024թ. փետրվարի 5-ի
թիվ 19-Ա որոշման

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

| Հ/Հ | Միջոցառումների անվանումները | Կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | **1. Կանխարգելիչ միջոցառումներ** | | |
| 1. | Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն | Համայնքների ղեկավարներ | Մինչև 15.03.2024թ. |
| 2. | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար | | |
| 3. | Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները | | Մինչև 15.03.2024թ. |
| 4. | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար | | Մշտական |
| 5. | Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ | Մինչև 15.03.2024թ. |
| | **2. Հիմնական միջոցառումներ** | | |
| 1. | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ | Մշտապես |
| 2. | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար | Համայնքների ղեկավարներ | Անհրաժեշտության դեպքում |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 3. | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը | Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքների ղեկավարներ | Անհրաժեշտության դեպքում |
| 4. | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ | Ըստ անհրաժեշտության |
| 5. | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների | Համայնքների ղեկավարներ | Անհրաժեշտության դեպքում |

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Ներսիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 05 » փետրվարի 2024թ. № 20-Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը՝

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կտ

2024թ. փետրվարի 05
գ. Լոռի Բերդ

Հավելված.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2023թ. դեկտեմբերի 25-ի № 232 -Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Նունե Սարգսի Օհանյան - 40000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Կողես
2. Ջուլիետա Արտյոմի Դիլանյան - 30000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
3. Արմեն Արայիկի Ռուշանյան - 30000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ
4. Լեռնիկ Ավետիկի Անանյան - 30000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
5. Աշոտ Վադիմի Չատինյան - 30000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
6. Ավետիք Արշավիրի Ջիլավյան - 40000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
7. Արտուշ Արմիկի Մելիքյան - 30000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ
8. Նվարդ Կարենի Հարությունյան - 40000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Բովաձոր
9. Իննա Ռոբերտի Սարգսյան - 40000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Բովաձոր
10. Նարինե Արշավիրի Առաքելյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
11. Սոֆյա Վոլոդյայի Բաղդյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
12. Ալիսա Իշխանի Գաբրիելյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
13. Էդգար Հովհաննեսի Մանուկյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
14. Արման Սիրեկանի Հովասափյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
15. Արման Ասպետի Սաքանյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ
16. Արման Ասպետի Սաքանյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ

17. Աղունիկ Աբրահամի Մելիքջանյան – 40000 ՀՀ դրամ, թոռան երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
18.Սամսոն Սուրենի Մելիքջանյան – 40000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
19. Ռոբերտ Արշալույսի Դալլաքյան – 40000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Լեջան
20. Անուշ Սանասարի Պապյան – 40000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
21. Գարիկ Գուրգենի Սախյան – 40000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Լեջան
22. Մոնիկա Արմենի Մելիքջանյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
23. Լիլիթ Նորայրի Մարգարյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
24. Լալա Գարեգինի Շահբազյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
25. Շողեր Գեղամի Ջիլավյան – 20000 ՀՀ դրամ, թոռան 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
26. Արայիկ Վալտերի Մելիքջանյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
27. Սրապիոն Ոսկանի Չոբանյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
28. Անի Մերուժանի Մկրտչյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
29. Սուսամբար Արամայիսի Հակոբջանյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
30. Համլետ Հիդայադի Մարտիրոսյան – 20000 ՀՀ դրամ, 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
31. Անի Սամվելի Սերոբյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
32. Գայանե Լևոնի Գոքորյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
33. Մարինե Սասունի Դիլանյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
34. Վաչագան Խաչիկի Խաչատրյան – 20000 ՀՀ դրամ, զարմիկի 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
35. Ռաֆիկ Սամվելի Պապյան – 20000 ՀՀ դրամ, 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ

36. Վիգեն Կուրղնի Դիլանյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
37. Արարատ Արայիկի Պետրոսյան – 20000 ՀՀ դրամ, 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
38. Հերմինե Ռաֆիկի Այվազյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Յաղդան
39. Սաթինե Սեյրանի Ղազարյան – 20000 ՀՀ դրամ, ամուսնու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Յաղդան
40. Աշխեն Մամիկոնի Դալլաքյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Յաղդան
41. Արթուրիկ Լևոնի Պողոսյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Յաղդան
42. Սեյրան Սպարտակի Այվազյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
43. Սուսաննա Սեթրակի Սուքիասյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով
44. Արուսյակ Մկրտիչի Իլխիջյան – 20000 ՀՀ դրամ, որդու 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 06 » փետրվարի 2024թ. № 21-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0018-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի բնակիչ Սուսամբար Մամիկոնի Խառատյանի կողմից ներկայացված դիմումը, 27.02.2023թ.-ին տրված թիվ 1116 գրանցամատյանով հաստատված սեփականության իրավունքի վկայագիրը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   ԵՄ**

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0018-0008 ծածկագրում գտնվող 0.06697 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0018-0008 ծածկագրով հողամասի մակերեսը 0.06697 հա

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.06697 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Սուսամբար Մամիկոնի Խառատյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0018-0008 ծածկագրի տակ գտնվող 0.06697 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 48.20քմ մակերեսով բնակելի տան, 60.00քմ մակերեսով բնակելի տան բ/պ կամ ա/հ-ի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Սուսամբար Մամիկոնի Խառատյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2024թ. փետրվարի 06**
**գ. Լոռի Բերդ**